

## Ո. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(Բ. լսարանի ուսանող, սարկավագ)

# Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

(Կարդացված Օշականում, Ս. Սահակի և Ս. Մեսրոպի տոնին,  
1950 թվի հունիսի 29-ին)

Հինգ տարի է անցել այս օրից, երբ հիմք դրվեց Ս. Էջմիածնի նորաբաց Հոգևոր Ճեմարանին:

Դա 1945 թվին էր:

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ. Կաթողիկոսի անմիջական և անդուռ ջանքերով և իմաստոն զնկավարությամբ, նորաբաց Հոգևոր Ճեմարանը 1945 թվից սկսեց ուսման իր ընթացքը:

Հայ Եկեղեցին, հավատացյալ հայ ժողովուրդը մեծ հույսեր էին կապել նորաբաց Հոգևոր Ճեմարանին, ծանր պարտավորություններ էին դրված թե՛ ուսանողության և թե՛ դասախոսական կազմի վրա: Հոգևոր Ճեմարանը իր առջև դրել էր մի սրբագան նպատակ, որով պիտի ընթանար ապագան ճեմարանավարություն:

Ո՞ր էր այդ սրբագան նպատակը, գաղափարական այն ուղին, որով պիտի ընթանար ապագան ճեմարանավարությունը և ո՞րքանով Ճեմարանը իր գոյության հինգ տարում հասավ իր այդ նպատակին:

Հոգևոր Ճեմարանը տնի միայն ու միայն մի նպատակ, ամենէ՝ լուսամիտ, բարձր պատրաստություն ունեցող աղջամատողներ տալ հոգևոր ասպարեզին:

Հայ ժողովրդի համար ճեմարանավարությունը լինի աշխարհիկ թե Հոգևոր, միայն մի նպատակ պիտի ունենա, այն է՝ լինել իր ժողովրդի հարազատ և հավատարիմ զավակը: Հոգևոր Ճեմարանը Հայ Առաքելական Եկեղեցուն պիտի տա պատրաստված, անձնվեր, քաջ ու հավատարիմ հովիվներ, որոնք իրենց առաջինազարդ վարքով փայլեցնեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և ընդհանրապես Հայոց Եկեղեցին:

Նախկինում, երբ չունեինք պետականություն, երբ ազգի ուսումնական հաստատությունների կառավարման և հաստատման ծանր բեռլ ընկած էր Մայր Աթոռի ուսերին, Գեորգյան Ճեմարանը լսարանական մասով իր ժամանակին Հայաստանում եղած միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը, որը և անմիջականորեն Մայր Ա-

թոռի կարիքների համար ծառայող ուսումնական հաստատությունն էր, տալիս էր բազմակողմանի մասնագիտության տեր շրջանավարտներ:

Այսօր խնդիրը միանգամայն տարբեր է: Այսօր մենք ունենք ամուռ պետականություն: Սովետական իշխանությունը հրովար է մեր ուսումնատենչ երիտասարդության ուսման դժվարին և պատրասխանատու գործը: Բացված են բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատություններ, որտեղ հազարամբը ուսանողներ ստանում են բարձրագույն կրթություն իրենց ընտրած ու սիրած մասնագիտությունների բնագավառում: Այժմ Մայր Աթոռը ազատ է նախկինում ունեցած իր ծանր պարտականություններից, հետևաբար և նորաբաց Հոգևոր Ճեմարանը միանգամայն նոր հիմունքների վրա դրված դպրոց է, այն կրօնական աղքային մի եղակի հաստատություն է: Այսօր Հոգևոր Ճեմարանը պիտի պատրաստե պատմաբանասիրական մեծ պատրաստությամբ և առողջ մտքի տեր հոգևորականներ, ուսուցիչներ, ինչպես նաև էին ասում վարդապետներ, որոնք զուգընթացաբար պիտի ուսումնասիրեն մեր անցյալի հարուստ ազգային կուտուրան, ձեռագրերը և հնությունները, մանրանկարչությունն ու գեղարվեստը, գիրն ու գրականությունը, մեր մոտ անցյալի բանասիրական գրականությունը, և այդ բոլորի վրա ավելացնելով նորը, նրանք պիտի դառնան լավագույն հայագետներ, բանասերներ:

Ահա սրանք են այն գլուխուր և առաջնահերթ խնդիրները, որ պիտի իրագործե Հոգևոր Ճեմարանը առաջիկացնում:

Հինգ տարի առաջ Հոգևոր Ճեմարանը ուներ մի դասարան՝ 35 ուսանողներով: Վեհափառ Հայրապետի անմիջական հոգացողության ներքո, Հոգևոր Ճեմարանի Վեհատեսչի և ուսումնական մանկավարժական խորհրդի ջանասեր զեկավարության ջնորհիվ, Ճեմարանը հետզետե ապահովվեց որպակյալ, բարձրագույն կրթության տեր դա-

սախոսական կազմով, պարտաճանաշ և հոգածու վերակացուներով։ Բարինապատ պայմանները ստեղծվեցին ուսանողության համար, նրանք պահովվեցին ամեն տեսակ հարմարություններով։ Ճեմարանի պաշտով, խաղաղիկ ու հանգիստ կյանքը այն ամենամնած պայմանն է, որով Հոգևոր Ճեմարանի ուսանողը կարող է հասնել ինչոր և լուրջ հաջողությունների ուսման բնագավառում։

Անտեսել այն դժվարությունները, որոնց առաջ կանգնած էր Հոգևոր Ճեմարանը, և այն դժվարությունները, որոնք շարունակվում են, չև կարելի ի՞նչարկե, մեծ գործերը պահանջում են և մեծ դժվարություններ։

Դժվարություններից ամենամնածը Հոգևոր Ճեմարանի տնտեսական ապահովման խնդիրն է, որի ամբողջ ծանրությունը համարյա իր վրա է կրում Մայր Աթոռի Այսօր հայկական բոլոր եկեղեցիների վրա, հայ հավատացյալ համայնքի վրա մի սրբազն պարսկականություն կա դրված՝ մուծել իրենց արժանագոր լուսման հօգուտ Հոգևոր Ճեմարանի, Մայր Աթոռի այդ հիմնական ու կարեոր հաստատության։

Անցան իրար հետևից տարիները, և այդ անցած տարիների ընթացքում շատ բան փոխվեց դեպի լավից։ Ուսանողության կըրթական մակարդակը գնալով հետքետե ավելի բարձրացավ Ալժմ Ճեմարանում կա զարգացած ու կրթված երիտասարդություն, որը և լավ պատճառ է խոստանում։

Ճեմարանի դասախոսական կազմը համարվել է մեծ պատրաստականության տեր գիտական աշխատակիցներով (պրոֆեսորներ, գիտության թեկնածուներ, ավագ դասախոսներ)։ Լավ հիմքերի վրա է դրված ուսանողության հանգստի և կուլտուրական սպասարկման խնդիրը։ Հիմք տարիների ընթացքում, Ճեմարանը միշտ էլ պատվով է կատարել իր ստանձնած պատասխանատու խնդիրները։ Ամեն տարի Ճեմարանը իր ուսումնական տարին փակում է պատվով ու նշանակալից առաջադիմությամբ։ Տարեկերջին բազմաթիվ ուսանողներ ստանում են բազմաթիվ նվիրներ, գերազանց առաջադիմության և վարդի համար։

Ամեն տարի թե՛ դասերի և թե՛ հատկապես տարեկերջի քննություններին ներկա է գոյնվում ճերտմազարդ Հայրապետը, Զնայած իր պատկառելի հասակին, նա ուշադիր և համբերատար լսում է բոլորի պատասխանները, հարցել տակիս ուսանողներին, հետաքրքրվում է, թե՝ ո՞րքանով են նրանք յուրացրել անցած դասընթացը, ո՞րքանով առաջադիմել անցած տարվա համեմա-

տությամբ, ապա ուղղություն տալիս դասախոսներին այս կամ այն հարցի վերաբերյալ։ Եվ երբ լսելով ուսանողների համարձակ, դիմուկ և ճիշտ պատասխանները, Վեհափառը համոզվում է նրանց ձեռք բերած գիտելիքների ամբողջական լինելու մասին, այն ժամանակ նրա գերմքը փայլում է գոչունակությունից։ Զէ՝ որ այդ բոլորը իր ցանած սերմերն են, որոնք պատու են տալիս, սերմեր, որոնք ընկել են մաքուր, արգավանդ հողում և նման են Ավետարանի հատիկին, որ պազում արդինս առնէ, ընդ միոյ վախոսն և ընդ միոյ հարիւր։

Այսօր Հոգևոր Ճեմարանը սնի մի դասաւան և Ա. և Բ. կարանները նկատ տարի, իր նա կողուրի իր վեցամյա ուսումնական տարեշշրջանը, կոնհենա երեք լսարաններ, ամբողջացնելով նրա բարձրագույն ուսումնական լրիվ դասընթացը։

Հոգևոր Ճեմարանը իր գոյության տարիներին տվել է հինգ կուսակրոն երիտասարդ սարկավագներ, որոնք վնելով Մայր Աթոռի կրտսեր միաբաններից, միանգամ ընդ միշտ իրենց նվիրել են Մայր Աթոռի, Հայ Եկեղեցու և Հայ Ժողովրդի շահերի պաշտպանության գործին։ Սարկավագության համար կան նաև ուրիշ թեկնածուների մասնակիության համար կան նաև առդիշ թեկնածուներ։ Այսպիսով, Հոգևոր Ճեմարանը արդեն խսկ հասել է իր առաջնահերթ խնդիրներից մեջի իրագործմանը, այն է՝ տալ Հայ Առաքելաշամիլի Եկեղեցու համար արժանագոր Հոգևորականներ։

Բարձր արդյունքներով փակելով հիմնական պարին, Հոգևոր Ճեմարանը կանգնած է վեցերորդ ուսումնական տարվա շեմքին։ Դա վերջին և վճռական տարին է Բ. կարանցիների համար և վճռական է նաև ամբողջ Հոգևոր Ճեմարանի համար, քանի որ պիտի երևա այն արդյունքը, որին այնքան երկար և հուսական փողոցը Մենք այսօր, այս նվիրական ժամին, Ա. Մեսրոպի գերեզմանի առաջ, պիտի պատվագոր խոսք տանք է լ ավելի լավ սովորել, գիտության մեջ խորանալ, հարստացնել մեր ուսման մակարդակը նորանոր գիտելիքներով, բոլորի համար բարոյականության և կարգապահության օրինակելի տիպարներ դառնալ։

Թող հեռու լինեն մեզանից մեծ պատմահոր նկարագրած աշակերտների տիպարները՝ Անշակերտք հեղգք առ ուսումն և փոյթ առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն՝ աստուածաբան։

Հոգևոր Ճեմարանի ուսանողին վայել շեն ծովությունն ու մեծամտությունն, անհոգությունն ու անհամեստությունը։ Նա իր համատափականությամբ, մարդասիրությամբ և

ընկերասիրությամբ պիտի փայլի բոլորի աշքին: Աշխատանքը նրա կիրքը պիտի լինի, ուսման տեսնը երբեք պիտի չհանգչն նրա սրտում: Նա պիտի նմանվի ժրաշան մեղմի, որը օրն ի բուն քաղցր նեկտար է հավաքում զանազան ծաղիկներից: Ճեմարանականը օր ու գիշեր պիտի ամբարի գիտության պաշարը, տքնի, չարչարվի, զարդանա, կատարելագործվի հոգուու իր աղդի, իր ժողովրդի և իր հարազատ Հայրենիքի: Ճեմարանի ուսանողը, բարի հսկական նշանակությամբ, ազատ է տնտեսական ամեն տեսակի հոգսերից: Նրան մնում է միայն ամուր կաշել գործին, և որ ամենակարուրն է ժամանակը շահել և չկորցնել: Ժամերով գրքի վրա հակվելը, գրքերի մեջ թաղվելը, ուսումնաշիրությունն ու բեղմնավոր, տքնազան աշխատանքը նրա գլխավոր ամենօրյա աշխատանքը պիտի վիճեն: Ճեմարանի սանը մի բան լավ պիտի իմանա, որ ինքը ընդհանուրի գորգուրանքի առարկան է և իր վրա շատ մեծ հոգսեր կան դրված: Նա պիտի աշխատի ի դերեւ շնանել այդ փայտայված հույսերը և առաջին հերթին՝ Վեհափառ Հայրապետի հույսերը:

Հոգուոր Ճեմարանի ուսանողին, ապագա Ճեմարանավարուին, հոգեորականին, պիտի զարդարի երկու գլխավոր բարեմանություն՝ եկեղեցասիրությունը և հայրենասիրությունը: Ճեմարանավարությունը և երիտասարդ հոգեորականը, այդ միմնույն է, պիտի սիրի իր Առաքելաշավիդ և ավանդապահ Ս. Եկեղեցին և իր մաքրափայլ, անբասիր փարքով և կենցաղավարությամբ պիտի զարդարի նրան: Ապագա հոգեորականի ամենամեծ զարդը հայրենասիրությունը պիտի լինի: Հայ Եկեղեցականը միշտ էլ իր ժողովրդի հետ քայլել է, պաշտպանել չնրան ամեն տեսակի վերահաս արհավիրքներից և վտանգներից, իր ժողովրդի ցավն ու վիշտը կենել է միասին, ստատ է հանդիսացել իր ժողովրդին օտարության մեջ և հարկ եղած դեպքում զենքով թե գրշով, խաչը ձեռքին մաքրել է օտարերկրյա բռնակալների դեմ, Հանուն իր Հայրենիքի և հանուն իր դավանանքի և ինքնուրուվնության:

Հայ Եկեղեցին այլ շահ չի ունեցել, բայց միայն ժողովրդի շահը: Նա միշտ էլ հնչեցրել է Քրիստոսի սիրո, մարդասիրության և Համերաշխության սրբազան գաղափարները ընդում բռնակալների, որոնք իրենց շահագործման ծանը լուծն են դերեւ հայ ժողովրդի ուսին:

Ահա այս վեհ սկզբունքներն են, որ նրան ապրեցրել են դարեր շարունակ:

Բավական է հիշել այնպիսի մեծ հոգևորականների, ինչպիսիք էին Սահակ Պարթև

կաթողիկոսը և հայ ամենամեծ մարդը՝ հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը, որոնք իրենց աշակերտների հետ միասին, հիսկերորդ դարում գիր ու գրականություն տվին հայ բազմաշարք ժողովրդին, այնպիսի մի ժամանակ, երբ որոշվում էր հայ ժողովրդի լինել կամ վիճելու խսդիրը: Նրանք մի անխորտակ գենք տվին հայ ազատահեր ու շինարար ժողովրդի ձեռքին, որը նրան միշտ էլ պետք եկավ իր դարավոր ազատագրական պայքարի ընթացքում, որի միջոցով նա իր գոյությունն ու անկախությունը պաշտպանեց, և ապրում է զարգացնելով իր գրականությունը, արվեստը և կուլտուրան: Բավական է հիշել քաջ Ղեոնդ երեցին և Հովենի կաթողիկոսին, որոնք Վարդանաց սիրուն ու հոգին էին, և որոնք, իրենց Հայրենիքի սերը սրտում, ընկան թշնամու սրուլ: Եվ մի՛թն Վարդանանք Սահակի, և Մեսրոպի ու նրանց աշակերտների արդյունքը չէին: Մի՛թն նրանք իրենց ուսուցիչներից ստացած՝ ազգային լեզուն ու ոգին, Հայրենիքի սիրու և անկախության գաղափարը չէ՝ որ պաշտպանեցին: Կարող էին նրանք այդ բոլորը հեղտությամբ հանձնել թշնամուն և անձնատուր լինել: Նրանք դիմագրավեցին մինչև վերջ և գիմացեալ մահացով ընկնելով, փառաց պատկ հյուսելով իրենց անվան շուրջը, հաղթեցին բռնությունը: Արբաս հաղթեց հայ ժողովուրդը դարեւ շարունակ:

Հայրենասեր Սահակ Զորափորեցի կաթողիկոսը աշխի ընկավ իր անձնվեր հայրենասիրական գործուով: Նա գնաց մինչև Միջակետքի Խառան քաջաքը ընդառաջ անդուի բռնակալին (Օգուգային), նրանից գթություն հայցելու իր անմեղ հոտի համար և այստեղ էլ մահացավ: Սերունի կաթողիկոսի աղաշանքը իգուր շանցավ և հայ ժողովուրդը գրկեց կոտորածից:

Գանձասարի նսայի անվեհեր կաթողիկոսը, հետագայում Հովենի Արդյության արքեպիսկոպոսը և ուրիշները քիչ գործ շարեցին հայ ժողովուրդին փրկելու աշխատանքում: Նրանք իրենց դիմավանդիտական նամակներով, խնդրագրերով հրամափուած էին ուսաց զորքին՝ գաղ ազատելու հայ ժողովուրդին ռանդեների՝ պարսից բռնակալ լժից:

«Հայրենյաց պաշտպան» Ներսես Աշտարակեցին, 1827 թվին, ուսուական քանակում հայ զորքերին առաջնորդեց պարսից դեմ մղված պատերագմին, անձնամբ մասնակցեց կոփիներին և իր կոչերով ուտքի հանեց հայ զանգվածներին ընդեմ պարսկական բռնակալության:

Բավական է հիշել ժողովրդասեր կաթողիկոս իրիմյան Հայրենիքին և ուրիշներին,

նվ ի վերջո, այսօր ճեմարանցին օրինակ պիտի վերցնի իր իմաստուն Հովվակետից՝ Ամենայն Հայոց Վեհափեռ Հայրապետից, Հայրենական պատերազմի ծանր օրերին, քիչ գործ չարեց նա անարդ թշնամուն չափավակը ծիփում, հավատացյալ հոտի օգնությամբ կազմելով տանկային շարասյուներ՝ ուղամաձակատին օգնելու համար:

Այսօր, աշխարհի բոլոր ժայրերում, պատմական ճակատագրի բերումով ցըլած հաւովթյունը, կամաց կամաց հավաքվում է իր հայրենի օրանը: Բացվել են Հայրենիքի դմեները, ամեն կողմից շարան շարան ձրգվել են հայրենադարձ հայ պանդուստների հայրենատենչ կարավանները դեպի Մայր Հայրենիք: Հայը այլևս չի դիմի կոռնկին, չի հնչի այլևս նրա մելամադիկ ու տիսուր երգը օտար աշխարհում, դարիքի աշխերից չի հոսի արտասուրը, կարոտ իր Հայրենիքին, իր շեն օգափին:

Մի կողմ նետած պանդստության փոշեթաթախ ցուալը, իրենց ոտներից թոթափած օտարի փոշին, միանգամ ընդմիշտ ազատված օտար երկնքի տակ դեգերելուց, վտարանդի հայերը արդեն ներս են մտել այն երկրի սեմից, որը իրենցն է եղել և ուր վերջ է տրվում այն անլուր տառապանքներին, որ կրել են նրանք հեռավոր հորիզոններում, և այժմ նրանք, երջանիկ և ուրախ իրենց Հայրենիքում, աշխատանքի և հաղթանակի երգեր են երգուած:

Եվ ո՞քան ուրախ ու քերկրալի է իմանալ, որ այդ մեծ ու պատվավոր գործին իր խոչըր մասնակցությունը ունի նաև Հայ եկեղեցին, Մայր Աթոռը, հանձին Վեհափառ Հայրապետի, որը միայն ու միայն պատիվ է բերում նրան:

Քիչ չեն Վեհափառ Հայրապետի ջանքերը հայ արդար դատի իրականացման գործուած: Նա իր կոչերով, կոնդակներով ու զանազան գործուածներով պահանջուած է հայ ժողովութիւնից արտար իրավունքը, այն է Թյուրքիայի կողմից անիրավացիորեն բռնապաված հողերի վերակցուածը Սովետական Հայաստանին, որը հայ դատի ամենածիշտ և ևսելացի լուծուածն է:

Եվ, վերջապես, Հայ եկեղեցին, Մայր Աթոռը, Վեհափառ Հայրապետը, պայքարուած են ամենակարևոր հարցի համար՝ խաղաղության համար, խաղաղության, որը մարդկանց օգից ու շրից էլ կարմոր է, խաղաղության, որը ծնուած է ամեն տեսակի բարիքներ: Ստոկհոլմի կոնֆերանսի խաղաղության կոչի տակ, մեկ մարդու նման ստորագրել են առաջին հերթին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռը միաբանությունը և Հոգմանը Շեմարանի ուսանողությունը: Մայր

Աթոռը իր պատգամավորությունն է ուղարկել Պրագայի խաղաղության կոնֆերանսին: Այսպիսով, նա իր խոսքն է ասել համայնշակարգին, հայ ժողովութիւն խոսքը, մի ժողովուրդ, որը ամենից շատ է տենչացել խաղաղության, որը իր կաշվի վրա լավ է զգացել թե ի՞նչ է պատերազմը, թե ի՞նչ են կոտորածն ու ավերը: Հայ ժողովուրդը ու ի բոխն պայքարել է խաղաղության համար: Բավական է հիշել այն բոլոր սարսափելի կոտորածներն ու արհավիրքները, որոնք անցել են հայ խաղաղասեր ու տոկուն ժողովութիւն գրանի, որպեսզի մարդ ապրուած: Այդ բոլորը խոր խոցեր են առաջացրել հայ ժողովութիւնի սրբուած: Այդ խոցերից ոմանք արտեն բուժվել են և ոմանք է բուժվուած են:

Ամեն մի խաղաղ ժամանակաշրջանում, Հայաստանը միշտ էլ անել ու բարգավաճել է, թե՝ կուտուղապես և թե՝ տնտեսապես:

Հայ հավատացյալը, իր մրմնշած աղոթքներով, միշտ էլ խաղաղությունն է հայցել. «Խաղաղութեամբ քով Քրիստոս Փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացը՝ զմեզ եւ աներկիւղ պահեա յամենայն շարէ»:

Հայ հոգեւորականը իր հումկու քարոզն է հնչեցրել՝ «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի...»:

Այսպես, հայոց պատարագի և ժամակարգության ամեն մի տողը տուգորված է խաղաղության վեհ գաղափարով: Եվ մի՞թե այս բոլորը պատահական են, կամ այս բոլորը մի՞թե խորթ են ժողովրդի ոգուն, և մի՞թե Ս. Ավետարանը սեր, խաղաղություն և եղբայրություն չի քարոզուած աշխարհին, կամ մեր Փրկիչը սիրո և խաղաղության վարդապետը չէ՞ր:

Այս բոլորը գալիս են ասելու այն, որ Հայ եկեղեցին, հավատարիմ Փրկիչի խաղաղասիրական ավանդին և իր ժողովրդի ձայնին, իր խաղաղության ձայնն է միացնուած ողջ աշխարհի Փրկիչ Ավետարանին հավատարիմ մնացած եկեղեցիների ձայնին, ողջ աշխարհի խաղաղասեր ժողովուրդների հումկու ձայնին:

Վեհափառ Հայրապետը, իր բեղմնավոր և շինարար գործունեությամբ, հայրենասիրությամբ, եկեղեցասիրությամբ և համեստությամբ, փալլուած է Ս. Լուսավորչի արքամանդաբարդ գահի վրա, որպես մի կատարելության տիպար:

Ճեմարանականը, աշխարհիկ թե հոգմոր, պիտի լինի աղնիվ քաղաքացի, իր ժողովրդի և հայրենի Պետության հավատարիմ ու արթուած պաշտպանը:

«Աղքն առավել քան երբեք, ու Եկեղեցին այսօր եղայրական համերաշխության և ազգային եկեղեցական միախոհության ու միակամության անհրաժեշտություն են զգում», — գրում է Վեհափառ Հայուապետը իր սրբատառ կոնդակում: Մի քան բոլորի համար պարզ է, որ Հայ հոգևորականը պիտի խիստ կերպով պայքարի այն բոլոր ունձգությունների դեմ, որ կատարվում էն Հայ Եկեղեցու, Հայ ժողովրդի և Հայ Հայրենիքի հանգեց դրանով նաև պաշտպանած կլինի իր ժողովրդի և իր իսկ շահերը:

Այսօր Հայ հավատացյալը, Հայ մարդը, ո՛րտեղ էլ լինի նա, Ամերիկայում թե Ֆրանսիայում, Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում թե Հեռավոր Չինակաստանում, մի փափագ ունի միայն — վերադառնալ իր դարավոր օրրանը, իր շքնաղատեսիլ ու Հուրազատ Հայրենիքը, տեսնել Ս. Եղմիածինը, համբուրել նրա խնկի ծխից սկացած քարերը, և արտասվալից աշքերով, վանքի հնադարյան կամարների տակ աղոթքներ մրմնջալ, որ Աստված խաղաղություն պարգևի համայն աշխարհին; Եվ նրա ցանկությունը կլինի

համբուրել իր ալեզարդ հովվապետի Ս. Աջը և ստանալ նրա հայրական բարի օրհնությունը:

Մենք էլ աղոթենք Ամենաբարձրավային, որ նա միշտ անսասան և ամուր պահե Լուսավորչանիմն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որ Լուսավորչի կանթեղը այնտեղ միշտ վառ ու անմար մնա:

Աղոթնեք, որ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը բարգավաճի ու զարգանա և դասախոսներն ու ուսանողությունը նորանոր հաջողությունների համանեն:

Աղոթենք, որ Մայր Աթոռի միաբանությունը էլ ավելի աճի, և սերն ու միաբանությունը անպակաս լինեն նրանից:

Եվ թող Աստված երկար կյանք, քաջառողջություն և զյամերամ ժամանակօք ապահով անգորրութիւն» պարգևե իր ընտրյալին, համայն հայության առաքինագարդ, իմաստուն, քաջ և աստվածարյալ Հովվապետին, Ս. Լուսավորչի արժանավոր հաջորդ ու բազմերախտ գահակալին՝ Գեորգ Զ. Վիհափառ Կոթողիկոսին: